# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԱՄ-ԳՀԾՁԲ-24/42

ք. Աշտարակ «31» Հուլիս 2024 թ.

«ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմը», ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Գևորգյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Միկան>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Միքայելյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՀՀ Կաքավաձորից դեպի Օթևան տանող ավտոճանապարհի ՊԿ0+00-ՊԿ13+00 հատվածի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:[1]

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15**_աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

**4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենքով սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-

ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի /համաձայնագրի/ վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի **1 (մեկ)** տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի **0,1 (զրո ամբողջ մեկ)** տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում

Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող՝ կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն**

նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[25]

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմ» | <<Միկան>> ՍՊԸ |
| ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան 4 | ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, |
| ՀՎՀՀ՝ 05031479 | Գործարանային նրբ. 21 |
| Հ/Հ ______________________ | ՀՎՀՀ 05551597 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական | Հ/Հ 1570074053580100 |
| վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ «Կումայրի» |
| Գլխավոր քարտուղար՝ Հ.Գևորգյան | մասնաճյուղ |
| | Տնօրեն՝ Կ Միքայելյան |
| ______________________ | ______________________ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

---

25 *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 4-րդ նախադասությունը, իսկ 5-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ ՀՀԱՄ-ԳՀԾՁԲ-24/42-1

**31.07.2024 թ. կնքված ՀՀԱՄ-ԳՀԾՁԲ-24/42 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

**/ ՀՀ կառավարության 2024 թվականի նոյեմբերի 21-ի N 1836-Ն որոշում /**

ք.Աշտարակ «26» Նոյեմբեր Դեկտեմբեր 2024 թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմը ի դեմս գլխավոր քարտուղար՝ **Հ. Գևորգյանի**, որը գործում է մարզպետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **<<ՄԻԿԱՆ>>** ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն **Կ.Միքայելյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից՝ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով **31.07.2024** թ. կնքված NՀՀԱՄ-ԳՀԾՁԲ-24/42 ծածկագրով պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.13 կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը որոշեցին՝**

1.1 Հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը /վճարման ժամանակացույց/՝ համաձայն կից հավելվածի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**2.1** Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և համարվում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի հետ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Պայմանագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով /2 օրինակից/ , որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմ | <<ՄԻԿԱՆ>> ՍՊԸ |
| ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան 4 | ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի |
| ՀՎՀՀ՝ 05031479 | Գործարանային նրբ. 21 |
| Հ/Հ 900441002871 | ՀՎՀՀ՝ 05551597 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Հ/Հ՝ 1570074053580100 |
| Գլխավոր քարտուղար՝ Հ.Գևորգյան | «Ամերիաբանկ» ՓԲԸ, Կոմայրի մ/ճ |
| | Տնօրեն՝ Կ Միքայելյան |
| ________________ /ստորագրություն/ Կ.Տ | ________________ /ստորագրություն/ Կ.Տ |

Հավելված

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71351540/502 | *ՀՀ Կաքավաձորից դեպի Օթևան տանող ավտոճանապարհի ՊԿ0+00-ՊԿ13+00 հատվածի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ* | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 375 000 | 375 000 |

**ԳՆՈՐԴ**

**ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմ**
**ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան 4**
**ՀՎՀՀ՝ 05031479**
Հ/Հ 900441002871
**ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն**
**Գլխավոր քարտուղար՝ Հ.Գանջալյան**

---------------------------
**/ստորագրություն/ Կ.Տ**

**ՎԱՃԱՌՈՂ**

**<<ՄԻԿԱՆ>> ՍՊԸ**
**ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի**
**Գործարանային նրբ. 21**
**ՀՎՀՀ՝ 05551597**
**Հ/Հ՝ 1570074053580100**
**«Ամերիաբանկ» ՓԲԸ, Կումայրի մ/ճ**
**Տնօրեն՝ Կ Միքայելյան**

---------------------------
**/ստորագրություն/ Կ.Տ**

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ ՀՀԱՄ-ԳՀԾՁԲ-24/42-2

**31.07.2024 թ. կնքված ՀՀԱՄ-ԳՀԾՁԲ-24/42 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

**/ ՀՀ կառավարության 2025 թվականի մարտի 13-ի N 299-Ն որոշում /**

ք.Աշտարակ «16» Ապրիլ 2025 թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմը ի դեմս գլխավոր քարտուղար՝ **Հ. Գևորգյանի**, որը գործում է մարզպետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **<<ՄԻԿԱՆ>> ՍՊԸ**-ը, ի դեմս տնօրեն **Կ.Միքայելյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից՝ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով **31.07.2024** թ. կնքված NՀՀԱՄ-ԳՀԾՁԲ-24/42 ծածկագրով պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.13 կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը որոշեցին՝**

1.1 Հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը /վճարման ժամանակացույց/՝ համաձայն կից հավելվածի:

**1.2 Ծառայության /Աշտատանքների/ կատարման ժամկետ է սահմանվում կապալառուի հետ համաձայնագրի կնքման պահից 72 օրացուցային օրն ընկած ժամանակահատվածը:**

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**2.1** Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և համարվում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի հետ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Պայմանագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով /2 օրինակից/ , որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| **ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմ** | **«ՄԻԿԱՆ» ՍՊԸ** |
| **ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան 4** | **ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գործարանային նրբ. 21** |
| **ՀՎՀՀ՝ 05031479** | **ՀՎՀՀ՝ 05551597** |
| **Հ/Հ՝ 900441002939** | **Հ/Հ՝ 1570074053580100** |
| **ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն** | **«Ամերիաբանկ» ՓԲԸ, Կումայրի մ/ճ** |
| **գլխավոր քարտուղար՝ Հ.Գևորգյան** | **Տնօրեն՝ Կ. Միքայելյան** |
| ------------------------------- | ------------------------------- |
| **/ստորագրություն/ Կ.Տ** | **/ստորագրություն/ Կ.Տ** |

*Հավելված*

*ՀՀԱՄ-ԳՀԾՁԲ-24/42-1 համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | | |
| | | | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71351540/2 | *ՀՀ Կաքավաձորից դեպի Օթևան տանող ավտոճանապարհի ՊԿ0+00-ՊԿ13+00 հատվածի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ* | - | - | - | 1 125 000 | 1 125 000 | 1 125 000 | 1 125 000 | 1 125 000 | 1 125 000 | 1 125 000 | 1 125 000 | 1 125 000 | 1 125 000 |

**ԳՆՈՐԴ**

**ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմ**
**ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան 4**
**ՀՎՀՀ՝ 05031479**
**Հ/Հ՝ 900441002939**
**ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն**
**գլխավոր քարտուղար՝ Հ. Գևորգյան**

---------------------------------
**/ստորագրություն/ Կ.Տ**

**ՎԱՃԱՌՈՂ**

**«ՄԻԿԱՆ» ՍՊԸ**
**ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գործարանային նրբ. 21**
**ՀՎՀՀ՝ 05551597**
**Հ/Հ՝ 1570074053580100**
**«Ամերիաբանկ» ՓԲԸ, Կումայրի մ/ճ**
**Տնօրեն՝ Կ. Միքայելյան**

---------------------------------
**/ստորագրություն/ Կ.Տ**

*Հավելված 3*
*«31» հուլիսի 2024 թ. կնքված*
*ՀՀԱՄ-ԳՀԾՁԲ-24/42 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
«ՄԻԿԱՆ» ՍՊԸ
ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի,
Գործարանային նրբ. 21
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ Կումայրի մ/ճ
ՀՀ 1570074053580100
ՀՎՀՀ 05551597

Պատվիրատու
ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմ
ք. Աշտարակ, Վ. Պետրոսյան 4
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՀ 900441002871
ՀՎՀՀ 05031479

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«24» դեկտեմբերի 2024 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **ՀՀ Կաքավաձորից դեպի Օթևան տանող ավտոճանապարհի ՊԿ0+00-ՊԿ13+00 հատվածի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ**
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «31» հուլիսի 2024 թ.
Պայմանագրի համարը՝ ՀՀԱՄ-ԳՀԾՁԲ-24/42
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «24» « դեկտեմբեր » 2024թ. դուրս գրված N B9314138675 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագր. հաստատված գնման ժամանակացույցի | Փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | Փաստացի | | |
| 1 | տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն | ՀՀ Կաքավաձորից դեպի Օթևան տանող ավտոճանապարհի ՊԿ0+00-ՊԿ13+00 հատվածի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ | 1 | 1 | 29.11.2024 - 20.12.2024 | 29.11.2024 – 20.12.2024 | 375,0 | 4-րդ եռամսյակ 2024 |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_______________
ստորագրություն
Կ. Միրաքյան
ազգանուն, անուն

Ծառայությունը ընդունեց

_______________
ստորագրություն

ազգանուն, անուն

Հավելված 3
«31» հուլիսի 2024 թ. կնքված
ՀՀԱՄ-ԳՀԾՁԲ-24/42 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
«ՄԻԿԱՆ» ՍՊԸ
ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի,
Գործարանային նրբ. 21
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ Կումայրի մ/ճ
ՀՀ 1570074053580100
ՀՎՀՀ 05551597

Պատվիրատու
ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմ
ք. Աշտարակ, Վ. Պետրոսյան 4
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՀ 900441002871
ՀՎՀՀ 05031479

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«03» հուլիսի 2025 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **ՀՀ Կաքավաձորից դեպի Օթևան տանող ավտոճանապարհի ՊԿ0+00-ՊԿ13+00 հատվածի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ**
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «31» հուլիսի 2024 թ.
Պայմանագրի համարը՝ ՀՀԱՄ-ԳՀԾՁԲ-24/42
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «03» « հուլիս » 2025թ. դուրս գրված N **B9016049924** հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալ մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագր. հաստատված գնման ժամանակացույցի | Փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | Փաստացի | | |
| 1 | տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն | ՀՀ Կաքավաձորից դեպի Օթևան տանող ավտոճանապարհի ՊԿ0+00-ՊԿ13+00 հատվածի հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ | 1 | 1 | 29.11.2024 - 28.06.2025 | 14.05.2025 – 12.06.2025 | 1125,0 | հուլիս 2025 |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության անբաժանելի մաս և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_______________
ստորագրություն
Կ. Միքայելյան
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_______________
ստորագրություն
_______________
ազգանուն, անուն
Կ.Տ.